ւոր է, թէ նոյն ժամանակաշրջաններում ի՛նչ պատկեր էին ներկայացնում Հայաստանի՛ն վերաբերեալ թուական տուեալները:

Խօսքը, ի հարկէ, միշտ էլ Անդրկովկասեան Հայաստանի մասին է: Եւ սակայն, եթէ վիճակագրական տեղեկութիւնների ամփոփումը Անդրկովկասի հայութեան վերաբերեալ ինքնին բաւականաչափ դժուարութիւններ է ներկայացնում, նոյն այդ աշխատանքը Հայաստանի հողային տարածութեան (տերրիտորիա) եւ նրա ազգաբնակչութեան մասին՝ հանդիպում է գրեթէ անյաղթահարելի խոչընդոտների: Եւ այդ ո՛չ միայն նրա համար, որ ռուսական հարիւրամեայ տիրապետութեան ընթացքում Անդրկովկասը բաղմիցս ենթարկուել է վարչական նորանոր բաժանումների, ո՛չ միայն նրա համար, որ նոյն այդ ժամանակաշրջանում Անդրկովկասի քաղաքական սահմանները մերթ լայնացել են եւ մերթ էլ տեղմուել, որպէսզի հաշիւներ անելով կարելի լինէր մօտաւորապէս ճշդել զանազան թուականների տուեալները, այլ եւ մանաւանդ նրա՛ համար, որ ռուսական իշխանութիւնները գրեթէ երբեք էլ չեն ճանաչել եւ ընդունել ազգային հողամասեր (տերրիտորիաներ) Անդրկովկասում, որով եւ, բնականաբար, չէին կարող մտածել այն մասին, որ վիճակագրական տեղեկութիւններ հաւաքէին նաեւ համաձայն ազգային տերրիտորիաների:

Երբ 1801-ին Վրաստանը միացուեց ռուսական կայսրութեան, երբ այնուհետեւ, 10-15 տարի յետոյ, արեւելեան Անդրկովկասը եւ Ղարաբաղը, 1828-1829-ին էլ Երեւանի ու Նախիջեւանի խանութիւնները (այդ ամէնը՝ Պարսկաստանից գրաւուելով), յետոյ նաեւ Շիրակի, Ախալցխայի ու Ախալքալաքի շրջանները (Տաճկաստանից), աւելի ուշ էլ, 1878ին, Կարսի եւ Բաթումի նահանգները (զարձեալ Տաճկաստանից) գրաւուեցին ու միացուեցին ռուսական կայսրութեան (Անդրկովկաս), ցարական իշխանաւորներից ոչ ոքի մտքով իսկ չանցաւ, թէ յարգել պէտք է այդտեղ ապրող ազգութիւնների եւ ամենից առաջ՝ հայերի, վրացիների ու թաթարների պատմական իրաւունքները, թէ՝ դրանք աւելի կամ պակաս խոտութեամբ նստած են իրենց պատմական, հայրենի տերրիտորիաների վրայ, թէ՛ ուրեմն, պէտք է որպէս այդպիսի՛ն էլ նկատի առնուին:

Մի միայն կարճ ժամանակով (մինչեւ 1840 թ.) այն եւս քաղաքական եսական նպատակներով, ռուսները հայերի անունով «Հայկական Շրջան» կոչեցին մեր անդրկովկասեան հողերի այն մասը, որ տիրեցին նրանք 1828ին, Թուրքմանչայի դաշնագրի զօրութեամբ: Վրաստանը, որ մինչ այն գոյութիւն ունէր — թող լինէր նա չատ թոյլ եւ գրեթէ անուանական— որպէս անկախ թագաւորութիւն, աւելի շուտ՝ թագաւորութիւններ եւ իշխանապետութիւններ (Քարթալինա կամ բուն Վրաստան, Իմերէթիա, Կախէթիա եւայլն), վերացաւ մէջ տեղից ո՛չ միայն քաղաքականապէս, այլ եւ անուանապէս:

Մի որոշ ժամանակ միայն, որպէս վարչական միաւոր, պահպանուեց վրացիների համար — ինչպէս մեզ համար «Հայկական Շրջանն» էր — սկզբում «Վրաստանի Նահանգ», յետոյ էլ Վրա-Իմերէթեան Նահանգ» անունը: Դրանց մէջ մտնում էին նաեւ այնպիսի հայկական գաւառներ, ինչպիսիք էին եւ են՝ Լոռին, Փամբակը, Իջեւանը, Ջաւախքը (Ախալքալաք), անգամ Շիրակը: Նոյն այդ անուանակոչման ուշ մնացած արձագանգն էր նաեւ, հայ-եկեղեցական բաժանումով, «Վրաստանի եւ Իմերէթի թեմը», Թիֆլիս կենտրոնով:

Իսկ ինչ վերաբերում է արեւելեան Անդրկովկասին կամ թուրք-թաթարական տերրիտորիային, նա երբեք էլ, մինչեւ վերջը եւ մինչեւ նորաստեղծ, արուեստական «Ադրբէջան» անուան հրապարակ գալը, թէկուզ կարճ ժամանակով իսկ՝ ազգային-տերրիտորիալ կոչում չունեցաւ: Սկզբում Բաղուի, Գանձակի եւայլն խանութիւններ էին այդտեղ, յետոյ զարձան «Կասպիական Շրջան», մինչեւ որ վերջը, Անդրկովկասի միւս շրջանների հետ միասին, վարչական նոր բաժանումների ենթարկուեցին, վերածուելով զանազան նահանգների եւ գաւառների:

Վարչական – վիճակագրական տեսակէտից մինչեւ իսկ Անդրկովկասը որպէս այդպիսին ամբողջութեամբ պահուած չմնաց, այլ միացաւ Հիւսիսային Կովկասի հետ եւ երկուսով զարձան՝ Կովկաս: